

Լոռու Մարզ

Մարզկենտրոնը՝ Վանաձոր
Մարզի կազմավորման թիվը՝ 1995թ.ի ապրիլի 12
Տարածաշրջանները՝ Գուգարքի շրջան, Թումանյանի շրջան, Սպիտակի շրջան, Ստեփանավանի շրջան, Տաշիրի շրջան
Քաղաքային համայնքների թիվը՝ 8 համայնք
Գյուղական համայնքների թիվը՝ 105 համայնք
Գյուղական բնակավայրերի թիվը՝ 122 բնակավայր
Ընդհանուր տարածքը՝ 3,789 կմ²
Ամենաբարձր կետը՝ Թեժ լեռ (3107 մ)
Ամենացածր կետը՝ 308 մ
Բնակչության ընդհանուր թիվը (ըստ 01.01.2002թ.ի տվյալների)՝ 392,300 մարդ
Բնակչության խտությունը՝ 103.5/կմ²

Լոռու մարզի մարզկենտրոնը Վանաձորն է (նախկինում կոչվել է Մեծ Ղարաքիլիսա, Կիրովական), որն անցած դարասկզբին եղել է ոչ մեծ գյուղաքաղաք: Որպես քաղաքային բնակավայր ձևավորվել է 1930-ական, իսկ բուռն զարգացում ապրել է 1950-ական թվականներից սկսած: Այժմ Վանաձորը Հայաստանի Հանրապետության բազմաճյուղ արդյունաբերություն, ինչպես նաև կրթական, գիտական, առողջապահական, ու մշակութային հիմնարկների համեմատաբար զարգացած ցանց ունեցող կենտրոններից է, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների կարևոր հանգույց: Վանաձորը իր մարդաշատությամբ երկրի երրորդ քաղաքն է:

Լոռու մարզի մյուս քաղաքներն են Ալավերդին, Ստեփանավանը, Սպիտակը, Տաշիրը, Թումանյանը, Շամլուղը, Ախթալան:

Ալավերդին նշանավոր է նրանով, որ դեռևս 19-րդ դարի վերջին այստեղ կառուցվել է Հայաստանի ծանր արդյունաբերության առաջնեկը՝ «Մանես» պղնձաձուլական գործարանը: Նա եղել է մետալուրգիայի ամենահզոր ձեռնարկությունը անդրկովկասում և տվել է Ռուսաստանում արտադրվող պղնձի 1/4 մասը: 1980-ական թվականների վերջերին շրջակա միջավայրը աղտոտելու պատճառով արտադրությունը կանգնեցվեց: Այժմ աշխատում է իր հզորության մի մասով միայն:

1988թ. աղետալի երկրաշարժը մեծ վնաս հասցրեց նաև Լոռու մարզի արդյունաբերությանը: Շատ գործարաններ ու ֆաբրիկաներ հիմնովին ավերվեցին: Այժմ դրանց մի մասը վերականգնվում ու վերագործարկվում է:

Մարզի Դսեղ գյուղում է ծնվել ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որտեղ էլ գտնվում է նրա տուն-թանգարանը:

Վանաձորը ՀՀ Լոռու մարզկենտրոնն է (1995 թ-ից), մեծությամբ՝ ՀՀ 3-րդ քաղաքը:

Վանաձորը (մինչև 1935 թ-ը՝ Մեծ Ղարաքիլիսա, Ղարաքիլիսա, 1935–93 թթ-ին՝ Կիրովական) ՀՀ հյուսիսային մասում է՝ Փամբակի ու Բազումի լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում՝ Փամբակ գետի և նրա Տանձուտ ու Վանաձոր վտակների ափին: Վանաձորի շրջագծում են Ժդանով և Խնձորուտ գյուղերը: Բարձրությունը ծովի մակերևույթից 1353 մ է, հեռավորությունը Երևանից՝ 120 կմ: Քաղաքամերձ տարածքում է Մայմեխ լեռնագագաթը:

Կլիման մեղմ է, բարեխառն: Հունվարի միջին ջերմաստիճանը –4,2 oC է, հուլիսինը՝ 19,7 oC, տարեկան տեղումների միջին քանակը՝ 600 մմ: Բնակլիմայական պայմաններն

առողջարանային են: Շրջակայքում կան տուֆի, բազալտի, գրանիտի, գիպսի, կավի, օքրայի, ավազի պաշարներ:

Վանաձորի տարածքում և շրջակայքում հայտնաբերված հարուստ հնագիտական հուշարձանները վերաբերում են բրոնզեդարյան (մ. թ. ա. IV–II հազարամյակներ) մշակույթին: Գուգարք նահանգը, որի տարածքում էր Վանաձորը, մ. թ. ա. II դարում եղել է Մեծ Հայքի թագավորության, X դարում՝ Կյուրիկյան թագավորության կազմում: Ենթադրվում է, որ քաղաքի նախկին՝ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) թաթարական անվանումը տրվել է XIII դարի սկզբին՝ Վանաձորի հյուսիսային բլրի վրա սև քարով կառուցված եկեղեցու անունով:

1801 թ-ին Վրաստանի հետ Ռուսաստանին է միացել նաև Լոռին, և Վանաձորը դարձել է զորակայան: 1826 թ-ի հուլիս–օգոստոսին Հասան խանի զորքերը հիմնովին ավերել են բնակավայրը: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց (1828 թ.) հետո Վանաձորում բնակություն է հաստատել Կարսից, Արդահանից, Բայազետից, Էրզրումից գաղթած մի քանի հարյուր հայ ընտանիք: 1840 թ-ին Մեծ Ղարաքիլիսան մտել է Փամբակ–Շորագյալի գավառի, 1849 թ-ին՝ Երևանի նահանգի մեջ: 1870 թ-ին՝ Դիլիջան–Կիրովական–Լենինական խճուղու, 1899 թ-ին Թիֆլիս–Ղարաքիլիսա–Ալեքսանդրապոլ երկաթուղու կառուցումից հետո Մեծ Ղարաքիլիսան դարձել է գյուղաքաղաք, աշխուժացել է նրա տնտեսական և քաղաքական կյանքը: Քաղաքում գործել են ծխական (1853 թ-ից), օրիորդաց (1879 թ-ից), պետական երկդասյա ռուսական (1897 թ-ից) և այլ դպրոցներ:

1918 թ-ի մայիսին՝ Ղարաքիլիսայի ճակատամարտից հետո, թուրքական զորքերը գրավել են քաղաքը:

1920–30-ական թվականներին Վանաձորն ամառանոցային գյուղաքաղաք էր՝ 1–2-հարկանի բնակելի տներով: Հետագա տարիներին Վանաձորի արհեստավորատնայնագործական արտադրությունը վերածվել է բազմաճյուղ արդյունաբերության, ընդլայնվել է ուսումնական հաստատությունների ցանցը, ստեղծվել են մանկական հիմնարկներ: Քաղաքը զարգացել է հիմնականում արևելյան, հարավարևելյան և հյուսիսարևմտյան ուղղություններով. կառուցապատվել են Դիմաց, Բազում, Խնձորուտ, Տարոն, Տավրոս թաղամասերը, ստեղծվել են ջրային մակերեսներ, քաղաքամերձ հանգստի գոտիներ:

1988 թ-ի երկրաշարժից Վանաձորում ավերվել է բնակելի շենքերի, թաղամասերի, արտադրական, մշակութային, կենցաղսպասարկման կառույցների կեսից ավելին: Այնուհետև ԽՍՀՄ փլուզման և հանրապետության շրջափակման հետևանքով արդյունաբերական ձեռնարկությունների գերակշռող մասը մասամբ կամ ամբողջովին դադարել է գործելուց:

1990-ական թվականներից սկսվել են վերականգնման աշխատանքները. կառուցվել և ամրացվել են բնակելի ու հասարակական շենքեր, կառուցվել են Սբ Գրիգոր Նարեկացի եկեղեցին, հուշարձաններ, մասնակիորեն վերագործարկվել են քիմիական գործարանը, «Ավտոմատիկա», «Ավտոգենմաշ», «Էլեկտրոն» և այլ

ձեռնարկություններ, հագուստի արտադրությամբ հայտնի են «Բազում» ու «Գլորիա» ֆաբրիկաները:

Վանաձորում գործում են (2010 թ.) 20 մսուր-մանկապարտեզ, 33 հանրակրթական, 6 երաժշտական դպրոցներ, 3 վարժարան, պետական և մասնավոր բուհեր, այդ թվում՝ Հովհաննես Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, Երևանի ճարտարագիտական պետական համալսարանի ու Երևանի թատերարվեստի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղերը, Տեխնոլոգիական, Գյուղատնտեսական, Շինարարական պետական քոլեջները, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատը, Ստեփան Զորյանի տուն-թանգարանը, Հովհաննես Աբելյանի անվան դրամատիկական, «Բոհեմ» կամերային և տիկնիկային թատրոնները, 10 գրադարան, կամերային նվագախումբ ու երգչախումբ:

Վանաձորում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդանիստ (2000 թ-ից) Սբ Աստվածածին եկեղեցին:

Սպիտակ, քաղաք Հայաստանի Լոռու մարզում:

Փամբակի գեղատեսիլ հովտում, Փամբակ գետի և նրա վտակՓամբիջրի ափերին տարածված Սպիտակ քաղաքը մինչև 1949 թվականը կոչվել է Համամլու:

Համամլու գյուղի հիմնադրման մասին գրավոր վավերագրեր չկան: Ենթադրվում է, որ գյուղի բնակչության զգալի մասը, մոտ երեք դար առաջ, գաղթել
է Պարսկահայքի Հեր (հետագայի Խոյ) գավառից: Համամլու կամ Համամլի անվանումը հավանաբար առաջացել է պարսկերեն համամ (բաղնիք) բառից: Բաղնիքների առկայության

մասին են վկայում (նախկին շաքարի գործարանի տեղում նախկին Դեմի կոչված հանդամասում) հայտնաբերված կավե մեծ կարասներն ու խողովակները։

Համամլուի նոր՝ Սպիտակ անվանումը կապված է քաղաքի շրջակայքում եղած կրաքարի հանքերի հետ։

Քույր քաղաքներ

Լիմեն (2001-ից)

Օրշա (2013-ից)